ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» ապրիլի 2025 թվականի N: 138 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի հունվարի 07-ի N 4-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 6-րդ կետի 1-ին ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի ապրիլի 16-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Առափիի սողանքի կտրուկ ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով:

2. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին,

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ՝ Արմեն Ափոյանին:

3. Հաստատել.

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N1 հավելվածի,

2) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N2 հավելվածի:

4. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովը,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, ֆինանսական, գյուղատնտեսության և բնապահպանության, կրթության, մշակույթի և սպորտի, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունները,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ախուրյանի բաժինը,

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը,

6) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը,

7) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածքային տնօրինության «Շիրակ» տեղամասը,

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի ղեկավար կազմը:

5. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) մինչև 2025 թվականի ապրիլի 8-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը.

2) ուսումնավարժության մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ ուսումնավարժության նախապատրաստման հարցերով.

3) 2025 թվականի ապրիլի 15-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին.

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) պատրաստ լինել ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին ներկայացնելու համապատասխան զեկույցներ:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելության, ապահովել շտաբային ուսումնավարժության լուսաբանումը մարզի զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքով:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
ապրիլի 7-ի №138-Ն որոշման

ԿԱԶՄ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Արմեն Ափոյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ,
Արսեն Ադամյան-	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի ղեկավար,
Էդվարդ Սարոյան -	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ,
Թագուհի Հակոբյան -	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2025 թվականի
ապրիլի 7-ի N938-Ա որոշման

ԿԱԶՄ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/Հ	ՈՒսումնավարժության մասնակիցները	Միջնորդներ	
		պաշտոնը	ազգանուն, անուն
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար կազմը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունը,	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ (խմբի ղեկավար)	Հովսեփյան Լևոն
2.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը, Հայաստանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ (խմբի անդամ)	Գասպարյան Սերգեյ
3.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ (խմբի անդամ)	Ավետիսյան Գոռ

4.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթափոխի հերթապահ, ավագ հրահանգիչ (խմբի անդամ)	Թևանյան Հայկ
5.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը, «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածքային տնօրինության «Շիրակ» տեղամասը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթափոխի հերթապահ, համակարգչային օպերատոր (խմբի անդամ)	Գրիգորյան Անահիտ
6.	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ախուրյանի բաժինը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթափոխի հերթապահ, համակարգչային օպերատոր (խմբի անդամ)	Հակոբյան Ջուլետտա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է